ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 1988 թ. մայիսի 19-ին և 20-ին տեղի ունեցավ Ռուսաստանի քրիստոնեացման հազարամյակին նվիրված գիտական նստաշրջան:

Նստաշրջանին նախագահագեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Ռուս Եկեղեցու պատվիրակությանը գլխավորում էր Օդեսայի և Խերսոնի միտրոպոլիտ Սերգին: Նստաշրջանին մասնակցում էր նաև Վրաց Եկեղեցու ներկայացուցիչը: Ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ս. Վարդանյանն ու տեղակալ տիար Ռ. Զարգարյանը: Երկու օրերին էլ Վեհարանի հանդիսությունների դահլիճը լեցուն էր հայ և օտար ունկնդիրներով:

Նստաշրջանի առաջին օրը բաղկացած էր երկու նիստերից:

Նախ միաբաններն ու հանդիսականները միաբերան արտասանեցին Տերունական աղոթքը: Ապա սյուրոն Խորեն Պալյանի ղեկավարությամբ աշակերտները երգեցին մի քանի շարականներ:

Հետո նախ հայերեն, ապա ռուսերեն լեզվով ներածական հակիրճ խոսքով հանդես եկավ հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը, որն ի միջի այլոց ասաց.

«Վեհափառ Տեր, Աստուծո ողորմությամբ և Ձերդ սրբության օրհնությամբ, Վեհարանի հանդիսությանց այս դահլիճում հավաքվել են Հայ Եկեղեցու հոգևոր դասի և սյուշտոնեության ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, գիտության և մշակույթի գործիչներ և մեծ թվով հավատացյալներ, մասնավոր հանդիսությամբ տոնախմբելու Ռուսաստանի քրիստոնեացման 1000-ամյակը, որին և նվիրված է այսօրվա գիտական այս նիստը: Ձերդ Սրբության թույլտվությամբ, ցանկանում ենք ողջունել այստեղ ներկայությունը բոլորի, ի մասնավորի Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանի և հատկապես ներկայությունը Ռուս Եկեղեցուց՝ Օդեսայի և Խերսոնի միտրոպոլիտ Սերգիի, ինչպես նաև Վրաց Եկեղեցու ներկայացուցչի»:



Ռուս եկեղեցու 1000-ամյակին նվիրված գիտաժողովի ընթացքից մի պահ

Ապա Գարեգին եպս. Ներսիսյանը խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ իր օրհնության խոսքով բաց անելու օրվա հանդիսությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
(19 մայիս 1988 թ.)

Ես փառք եմ տալիս Աստուծո Ամենակալին, որ Հայաստանի արևոտ երկնքի տակ, Ս. Էջմիածնի կամարների ներքո, հավաքվել ենք այստեղ՝ պատմական մեծ մի իրադարձության հազարամյակի առթիվ: Մի իրադարձություն, որ պատմական նշանակություն է ունեցել ոչ միայն ռուս ժողովրդի հոգևոր, մշակութային և նույնիսկ քաղաքական զարգացման համար, այլ նաև մի իրադարձություն, որ դարեր շարունակ դարձել է համաշխարհային երևույթ: Հազար տարի առաջ այն մեծ խորհուրդը, որ Կիևում տեղի ունեցավ, և որ կոչվում է Ռուսաստանի մկրտություն, իրոք որ ժամանակի ընթացքում հետզհետե առավել տարածեց իր ճառագայթները համարյա ամբողջ աշխարհում, հատկապես Եվրոպայի և Արևելքի տարածքի վրա: Եվ ինչպես հայ ժողովրդի քրիստոնեացման պարագային, նաև ռուս ժողովրդի համար, քրիստոնեությանն հոչակումը Ռուսաստանում վերջնականապես կազմակերպեց ռուս ժողովրդի հոգին, նրա իմացական և հոգևոր ուժերը, և տվեց նրան ուրույն դիմագիծ, իբրև հոգևոր, ազգային միասնություն: Ռուս ժողովուրդը 1000 տարի առաջ իր սիրտը բացեց Քրիստոսի լույսին, այդ լույսով վերածնվեց և ամբողջական իմաստով դարձավ դեպի հոգևոր և մշակութային առաքելություն: Եվ դարերի ընթացքում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ծոցից ծնունդ առան մեծամեծ հոգևոր անձնավորություններ, մեծ աղոթողներ, Քրիստոսի մեծ վկաներ և մշակութային մեծ գործիչներ ինչպես նաև մեծ հայրենասերներ: Հազար տարիների պատմությունը փառավոր մի պատկեր է ներկայացնում աշխարհի քաղաքակրթությունների հորիզոնների վրա: Հայ Եկեղեցին, Կիևյան Ռուսաստանից աշխարհագրականորեն թեև շատ հեռու էր և հաղորդակցության միջոցներ չկային այն ատեն, այնուամենայնիվ, Հայ Եկեղեցին հոգևին հեռու չի մնացել Ռուս Պրավոսլավ Եկեղեցուց: Մենք պատմությունից գիտենք, որ անցյալ դարի սկիզբներին, 1828-ին Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, սակայն հոգևոր իմաստով Հայ Եկեղեցին վաղուց որոշ միության կապեր հաստատել էր Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ: Բազում վկայություններ կան տակավին 11—12-րդ դարերից սկսած: Մեկը ուզում եմ հիշել. 12-րդ դարի վերջերին Գրիգոր կաթողիկոսը հայոց, իր մի գրության մեջ հիշատակում է, մեծ փառաբանական խոսքերով, Ռուսաց Եկեղեցին, ասելով. «Քրիստոնեությունը փառավորող Ռուսաց Եկեղեցի»: Մեր օրերին Հայ Եկեղեցու եղբայրական կապերը, անշուշտ, հետզհետե սերտացան, հատկապես անցյալ դարից այս կողմ: Եվ մասնավորապես, սովետական կարգերի հաստատումից հետո: Ահա ես 38 տարի է Հայ Եկեղեցու առաջին սպասավորն եմ, և հենց առաջին օրվանից մինչև այսօր բազում ունգամներ հնարավորություններ, առիթներ են ստեղծվել, որպեսզի մենք Ռուս Պրավոսլավ մեր եղբայրների, ինչպես նաև վրացի մեր հոգևոր եղբայրների հետ միասին աղոթենք, միասին գործենք, միասին մտածենք մեր ժողովուրդների բարեկամության և եղբայրության մասին և միասին դիմենք դեպի մեր ապագան: Ահավասիկ, սքանչելի տվյալներ, որոնք մեզ ուրախացնում են, ոգեշնչում են, և մենք այս զգացմունքներով, այս հույզերով դիմավորում ենք Ռուսաստանի մկրր-



Ռուս Եկեղեցու 1000-ամյակին նվիրված գիտաժողովի ընթացքից մի պահ

առության հազարամյակը: Ուրախ եմ, որ մեր կողքին է գտնվում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու արժանավոր բարձրաստիճան հոգևորական՝ Օդեսայի միտրոպոլիտ Սերգին և մյուս ներկայացուցիչները Ռուս Եկեղեցու և Վրացական Եկեղեցու, որ գտնվում են այստեղ: Ողջունում եմ նաև ներկայությունը մեր շատ հարգելի պարոն Վարդանյանի՝ մեր պետական իշխանության ներկայացուցչի, ինչպես նաև բոլոր ներկաների:

Սիրելի ներկաներ, ամբողջ սովետական երկրի տարածքի վրա մի նոր գաղափար իր ճանապարհն է բացում, մի նոր գաղափար, որ կոչվում է մեկ ընդհանուր խոսքով պերեստրոյկա: Ես կարծում եմ, որ գուցե Աստուծո տնօրինությամբ ինչ-որ զուգադիպություն ստեղծվեց պերեստրոյկայի և Ռուսաստանի մկրտության հազարամյակի առիթով: Այս տոնակատարությունը և այս առիթով մեր երկրի առաջին ղեկավարի ընդունելությունը Պիմեն Պատրիարքի և այնտեղ արտասանված խոսքերը ցույց են տալիս, որ պերեստրոյկայի գաղափարը տարածվում է նաև կրոնական հոգևոր կյանքի վրա: Մենք ողջունում ենք այս նոր բացված ճանապարհը: Եվ մաղթում ենք Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին կատարյալ քաջառողջություն և իր բոլոր գործակիցներին՝ միտրոպոլիտներ և եպիսկոպոսներ Ռուս Եկեղեցու, մաղթում ենք բոլորին՝ ուժ, եռանդ, և Աստվածային ներշնչանքներ, որպեսզի այս պերեստրոյկայի պայմանների մեջ հետզհետե զարգացնեն և իր փառավոր բարձունքին հասցնեն Ռուս Պրավոսլավ Եկեղեցին: Մի արևմտյան մտածող վերջերս ասել էր, մի քանի տարի առաջ, որ քսանմեկերորդ դարը պիտի լինի կրոնական դար, կամ բնավ չպիտի լինի: Ես կարծում եմ, որ առաջին հաստատումը պիտի լինի ճշմարիտ, և երևի իսկապես քսանմեկերորդ դարը մի կրոնական ներշնչանքի դար պիտի դառնա: Եվ սրտանց մաղթում եմ, որ քսանմեկերորդ այս կրոնական դարի մեջ Ռուս Պրավոսլավ Եկեղեցին իր տիրական դիրքը գրավի ամբողջ աշխարհի քրիստոնեության հորիզոնի վրա: Թող Աստված օրհնի Ռուս Պրավոսլավ Եկեղեցին և Ռուս հավատացյալ ժողովուրդը: Ամեն:

Հետո Օդեսայի և Խերսոնի միտրոպոլիտ Սերգին կարդաց Պիմեն Պատրիարքի ուղերձը գիտական նստաշրջանի մասնակիցներին.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Տեր,

Սրտանց ողջունում եմ Ձեզ և Ռուսաստանի մկրտության 1000-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի բոլոր մասնակիցներին՝ հրավիրված Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Մեզ ուրախացնում է, որ հնագույն Հայ Առաքելական Եկեղեցին այդ գիտական նստաշրջանով նշում է Ռուս Պրավոսլավ Եկեղեցու մեծ հոբելյանը:

Անցած հազարամյակը հանդիսացել է ռուս և հայ քրիստոնյա ժողովուրդների միջև փոխհարաբերությունների անշեղ զարգացման մի շրջան: Պատմական աղբյուրները վկայում են, որ այդ փոխհարաբերությունները միշտ ծառայել են երկու ժողովուրդների հոգևոր և մշակութային փոխադարձ հարստացմանը:

Արդեն ավելի քան մեկուկես դար է, ինչ Արևելյան Հայաստանը մտել է

ռուսական պետության կազմի մեջ: Դա ծառայել է հայ ժողովրդի եկեղեցական և ազգային օջախի պահպանմանը:

Այդ ժամանակներից ի վեր Ռուս և Հայ Եկեղեցիների միջև փոխհարաբերությունները հիմնվել են փոխադարձ հարգանքի և եղբայրական երկխոսության սկզբունքների վրա: Իրենց զարգացման մեջ դրանք նոր զարկ ստացան վերջին տասնամյակներում, որի մեջ Մենք տեսնում ենք Ձերդ սիրեցյալ Սրբության մեծ վաստակը:

Մենք հուսով ենք, որ սույն նստաշրջանը կծառայի մեր Եկեղեցիների միջև փոխըմբռնման խորացման գործին և կունենա իր ներդրումը մեր խաղաղասեր բազմազգ հայրենիքի ժողովուրդների միջև բարեկամության և եղբայրության ամրապնդման ազնիվ գործում:

Եղբայրական սիրով ի Տեր՝

ՊԻՄԵՆ

Մոսկվա,
18 մայիսի 1988 թ.

Մայիսի 19-ին և 20-ին չորս հաջորդական նիստերին կարդացվեցին հետևյալ զեկուցումները.

ա) Օդեսայի և Խերսոնի միտրոպոլիտ Սերգին զեկուցում կարդաց «Ռուսաստանի մկրտության հազարամյակի մասին» թեմայով: Նորին Սրբազնությունը խոսեց Ռուսաստանի քրիստոնեացման մասին, մատնանշեց պատմական մանրամասներ իշխան Վլադիմիրի դեպի քրիստոնեություն կողմնորոշման կարևորության մասին: Ըստ զեկուցողի քրիստոնեության ընդունումը մեծ զարկ տվեց ռուս ժողովրդի հոգևոր և մշակութային զարգացմանը: Անհրաժեշտ է ընդգծել, որ Սուրբ Կյուրեղի և Մեթոդիոսի քարոզչական աշխատանքի մեջ բացառիկ դեր ունեցավ մայրենի լեզվի օգտագործումը, դրանով քրիստոնեությունը ընդհանրական դարձնելով հասարակ ժողովրդի համար: Ռուսաստանը մտավ եվրոպական քրիստոնեության համակարգի մեջ, որով և բարձրացավ Ռուսաստանի միջազգային դերը. «Ռուսաստանը սկսեց տեսանելի և լսելի լինել երկրի բոլոր ծայրերից», գրում է ժամանակագիրը: Սակայն, ամենակարևորը պետք է համարել այն, որ վերոհիշյալ ազդակների պատճառով բարգավաճեց ռուսական ազգային գիտակցությունը, որը միավորեց արևելյան սլավոնական տոհմերին: Պետք է առանձնահատուկ կերպով ընդգծել, ասաց միտրոպոլիտ Սերգին, որ Ռուս Եկեղեցին նեցուկ դարձավ ռուս ժողովրդի պայքարին օտար տիրակալների դեմ:

Զեկուցողը մատնանշեց, որ մեր օրերում մեծացել է Եկեղեցու դերը մանավանդ համաշխարհային խաղաղության պահպանման գործում. Ռուս Պրավոսլավ Եկեղեցին իր ամենագործարար մասնակցությունն է բերում այդ կարևորագույն գործին՝ միջուկային պատերազմի կանխարգելման:

Ապա Նորին Սրբազնությունը խոսեց Ռուսաստանի քրիստոնեացման հազարամյակի տոնակատարության մասին, հաղորդեց հանդիսությունների մանրամասն ծրագիրը. գիտական նստաշրջան, հանդիսավոր նիստեր, համատեղ աղոթքներ և այլն:

բ) Ներկաները ուշադրությամբ ունկնդրեցին պատմական գիտությունների դոկտոր Ղազար Այվազյանի «Ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Ռուսաց Եկեղեցում» թեմայով զեկուցումը, որտեղ հեղինակը փաստական տվյալներով, որմնանկարներով և արձանագրություններով ցույց տվեց, որ

դեռևս 13—14-րդ դարերից սկսյալ Ս. Գրիգոր Լուսավորիչը եղել է Ռուսաց Եկեղեցում մեծարված սրբերից մեկը (տես «Էջմիածին» ամսագիր, 1986 թ., Ե 53):

գ) Պարգև վարդապետ Մարտիրոսյանի զեկուցման թեման էր «Ռուս Եկեղեցու ոգեկանության ակունքների և առանձնահատկությունների մասին»:

Հենվելով 12-րդ դարի ռուսական կարևոր երկու սկզբնաղբյուրների վրա («Բան վասն օրինաց և բարեգործութեան», «Վլադիմիր Մոնոմախի քարոզումը») հոգեշնորհ հայր սուրբը նշեց, որ Ռուս Եկեղեցու դերը մեծ է ռուս ժողովրդի ազգային գիտակցության և ինքնաճանաչման ձևավորման մեջ:

դ. Վրաց Եկեղեցու ներկայացուցիչ Ալեքսանդր Թանդիլաշվիլու զեկուցման թեման էր «Ռուսաստանի, Հայաստանի և Վրաստանի մշակութային կապերը 19-րդ դարում»:

ե. Ադրբեջանի հայոց առաջնորդ Անանիա եպս. Արաբաջյանը զեկուցեց Հայ և Ռուս Եկեղեցիների համագործակցության մասին՝ խաղաղության պաշտպանության գործում:

զ. Ռուս Եկեղեցու ներկայացուցիչ Իգումեն Ինոկենտի Պավլովը ներկայացրեց Պավել Ֆլորենսկի քահանայի աստվածաբանական հայացքները և նրա ավանդը Ռուս Ուղղափառ Եկեղեցու աստվածաբանական մտքի զարգացման գործում:

է) Գևորգ Աբգարյանը կարևոր ճշգրտումներ արեց Բորիսի և Գլեբի նահատակության մասին՝ ըստ հայկական սկզբնաղբյուրների:

ը) Հուսիկ քահանա Լազարյանը անդրադարձավ Ղրիմի հայոց եկեղեցու պատմությանը:

թ) Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Պիոն Հակոբյանը իր զեկուցման նպատակն էր դարձրել՝ վեր հանել հայ հոգևորականության դերը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ջանքերի մեջ:

ժ) Եզնիկ քահանա Պետրոսյանը խոսեց Հայ Եկեղեցու թեմերի մասին Ռուսաստանում մինչև մեր օրերը:

ժա) Հրաչ Բարթիկյանի զեկուցման թեման էր՝ «Ռուս և Հայ Եկեղեցիների պատմության մեծարժեք նյութեր Երուսաղեմի Հունական Պատրիարքարանի մատենադարանում»:

Ապա, հանուն սփյուռքահայ հոգևորականների, հանդես եկավ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ և հունահայոց հայրապետական պատվիրակ Ոսկան եպս. Գալֆվակյանը, որն ի միջի այլոց ասաց.

«Ռուս ժողովրդի 1000-ամյա մկրտության առթիվ արժանի է, որ սփյուռքահայ հոգևորականների անունից համեստորեն ես էլ խոսք ասեմ: Շատ հետաքրքիր զեկուցումներ մենք լսեցինք այս երկու օրերի ընթացքում, հատկապես ես կառանձնացնեի պրն. Պիոն Հակոբյանի զեկուցումը՝ թե ինչպես ազատագրական պայքարի մեջ մեծ դեր են կատարել հայ հոգևորականները՝ իրենց հայացքը ուղղելով դեպի Ռուսաստան: Ակամա ես մտածեցի, թե քրիստոնյա մկրտվելը ինչքան ճակատագրական է եղել ռուս ժողովրդի համար, կարծեք թե նույնքան ճակատագրական է եղել հայ ժողովրդի համար: Եթե 1000 տարիներ առաջ ռուս ժողովուրդը քրիստոնյա չդառնար, ապա ո՞ւմ պետք է ուղղեր իր հայացքը ազատություն տենչացող հայ ժողովուրդը: Այս առթիվ մենք սփյուռքում ամբողջապես չենք ընկալում այն մեծ դերը քրիստոնյա Ռուսաստանի, որ նա ունեցավ 17-րդ, 18-րդ և 19-րդ դարերում Հայաստանի ազատագրության համար: Բայց ես խոսելով իմ հոգևոր

եղբայրների անունից, որոնք աշխատում են արտասահմանում, ուզում եմ կրկնել, որ մենք քաջ գիտակցում ենք քրիստոնյա Ռուսաստանի կատարած մեծ դերը, և ընդհանրապես ռուս ժողովրդի մեծ դերը Հայաստանի ազատագրման համար, մանավանդ հայ ժողովրդի ֆիզիկական պահպանման համար: Մենք ափիլուռքում շատ սերտ հարաբերություններ ունենք Ռուս Եկեղեցու ներկայացուցիչների հետ: Ես ուզում եմ այսքանով փակել իմ խոսքը և խնդրել Վեհափառ Հայրապետին, որ այս նստաշրջանի վերջավորության տա իր պատգամը մեզ»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ
(20 մայիս 1988 թ.)

Մեր նստաշրջանը իր աշխատանքները փակում է այս պահին, կարծում եմ, կարևոր աշխատանք կատարելուց հետո: Մի քանի շաբաթ առաջ էր, որ այդ մտածումը առաջ եկավ մեր մեջ, խորհրդակցաբար մեր պետական իշխանության ներկայացուցիչ, կրոնից խորհրդի նախագահ տիար Վարդանյանի հետ, որ ոգևորությամբ պաշտպանեց այս գաղափարը: Այսպիսով, կազմակերպեցինք այս նստաշրջանը, առավելապես մեր հոգևոր ճեմարանի տեսչության գործակցությամբ: Ես ուրախ եմ, որ հանդիսավոր բնույթ ստացավ այս նստաշրջանը:

Ռուսաստանի մկրտության հազարամյակի առիթով այստեղ ներկայացված զեկուցումները բոլորն էլ հետաքրքրական էին և տարբեր վկայություններ, փաստաթուղթեր ներկայացվեցին, առավել կամ նվազ չափով կապված Հայ Եկեղեցու պատմության և հայ ժողովուրդի ճակատագրի հետ, նույնիսկ քաղաքական իմաստով: Դրանք շատ հետաքրքրական էին և այդ զեկուցումների մեջ կարևոր չափով նորություններ կային, որոնց ծանոթ չէին նաև մեր պատմաբաններն ու գիտնականները, և հավանաբար ծանոթ չէին նաև մեր ռուս եղբայրները: Անհավասիկ, առիթ ստեղծվեց, որ մեր այս նստաշրջանը ի հայտ բերե այդ բոլորը, և ես խորհում եմ. թե այս նստաշրջանում խոսված զեկուցումները մենք առանձին հատորյակով կհրատարակենք, որպեսզի ավելի լայն տարածում ստանան այդ պատմական ճշգրիտ տվյալները: Ճիշտ արտահայտվեց Ոսկան սրբազան, երբ հարց տվեց, թե ի՞նչ կլիներ մեր Եկեղեցու և մեր ժողովրդի ճակատագիրը, եթե Ռուսաստանը քրիստոնյա չդառնար հազար տարի առաջ: Որովհետև այդ հնարավորությունը կար: Պետք է ասել, որ հազար տարի առաջ, երբ ռուս ժողովուրդը արդեն սկսել էր իբրև ազգություն քաղաքականապես կազմավորվել և պետության հորիզոնի վրա ներկայանալ իբրև ուժ եվրոպայում և հետագային ամբողջ աշխարհում, Կիևյան Ռուսաստանի աշխարհագրական դիրքը այն ատեն այնպես էր, որ շատ մոտիկ էին նաև մահմեդական ազգություններին Արևելքից: Իսկ Արևմուտքից կար ուժեղ հոսանքը, ճնշող հոսանքը լատինների: Ուրեմն, երեք հնարավորություններ կային ռուս ժողովրդի համար. ընդունել մահմեդականությունը՝ կամ ընդունել քրիստոնեությունը լատինական ուղղությամբ, իրենց հայացքը ուղղելով դեպի Կաթոլիկ Եկեղեցու կենտրոն՝ Հռոմ. Լեհաստանը արդեն ուժեղ կազմակերպված երկիր էր դարձել այն ժամանակ կաթոլիկական իր դավանանքով: Իսկ երրորդ կողմնորոշումը կարող էր լինել դեպի Բյուզանդիա, այսինքն Ուղղափառ Արևելյան Եկեղեցուն հարելով: Իշխան Վլադիմիրը, երևի քաղաքական հեռա-

տեսությունը ունենալով ռուս ժողովրդին ապագայում ինքնուրույն դարձնելու, կողմնորոշվեց դեպի Բյուզանդիոն:

Եվ իսկապես, այդ ճանապարհով Ռուսաստանը իր փառավոր պատմությունը հորինեց Ռուս Պրավոսլավ Եկեղեցու օրհնության ներքև, որ բոլորիս ծանոթ է: Այս իրադարձությունը հետագային իր ճակատագրական անդրադարձը ունեցավ մեր ժողովրդի կյանքի վրա, և հայ ժողովուրդը, իր նեղ օրերին մանավանդ, 18-րդ դարից սկսյալ, երբ հուսահատության մեջ էր, շրջապատված ոչ քրիստոնյա և ոչ բարեկամ տարրերով, կարողացավ իր հայացքը ուղղել դեպի փրկարար մի ճանապարհ, դեպի փրկարար մի հորիզոն, այն, որ կտաներ դեպի քրիստոնյա Ռուսաստան: Եվ հայտնի է բոլորիս, որ առաջին փրկության դուռը բացվեց այսօրվա Արևելյան Հայաստանի միացումով Ռուսաստանին: Այսօրվա Հայաստանի հողամասի վրա, ինչպես պատմաբանները վկայում են, 1828-ին հայության թիվը մի քանի տասնյակ հազարի շուրջ է եղել՝ հետևանք դարերի ընթացքում կոտորածների, գաղթերի և հալածանքների: Եվ Ներսես Աշտարակեցին, որ գլխավոր հեղինակներից մեկն էր Ռուսաստանին միացումին, երբ ռուսական հաղթանակից հետո պայմանագիր կնքվեց ռուսաց և պարսիկների միջև, պայմանագրի մեջ հոդված պարտադրեց ինքը՝ Ներսես Աշտարակեցին, որ բարեկամ էր ռուս զորավարի՝ Կրասովսկու հետ, որ հաշտությունից հետո հիսուն հազար հայեր պարսկական տիրապետության տակ եղած շրջաններից տեղափոխվեն, գաղթեն դեպի ազատագրված Արևելյան Հայաստան՝ վերադառնան իրենց Հայրենիքը: Եվ հետագային նաև ուրիշ ներգաղթեր կազմակերպված են Էջի Պարսկական և այլ շրջաններից, և այս ձևով ծնունդ առած է սկզբնավորումը այսօրվա մեր հայրենիքի, որի բնակչության թիվը 1920-ին հեռու էր մեկ միլիոն լինելուց: Եվ հիմա, փառք Աստուծո, շնորհիվ սովետական դարաշրջանին, արդեն երեք և կես միլիոնի ենք մոտենում: Անհավասիկ, ուրեմն, պարզապես մի քանի վկայություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի ճակատագրական նշանակություն ունեցավ Ռուսաստանի քրիստոնեացումը նաև հայ ժողովրդի համար: Մենք, այսօր հիշելով այս պատմական տվյալները և պատմության դասերը, կարծում ենք, մեր ազգային գիտակցությունը առավել կուղղվի մեր ժողովրդի հիմնական շահերի ուղղությամբ, այն է՝ պահել-պահպանել եղբայրության մեր սերտ կապերը Ռուս Պրավոսլավ Եկեղեցու և ռուս ժողովրդի, և Սովետական Միության մյուս հանրապետությունների հետ, աչքի լույսի պես պահպանելով այս ամբողջ կառույցը, որու մեջ հնարավորություն ստեղծվեց մեր ժողովրդի համար՝ գոյատևելու, աճելու, զարգանալու, և, ես հույս ունեմ, տակավին ապագա մեր արդար իրավունքները իրագործելու համար:

Այս մի քանի խոսքերով ես ուզում եմ վերջացնել իմ խոսքը և շնորհակալություն հայտնել բոլոր զեկուցողներին, որոնք այնքան բարեխղճությամբ, այնքան ձեռնհասությամբ և սիրով մասնակցեցին և լուրջ բովանդակություն տվեցին այս մեր գիտական նստաշրջանին: Թող Աստված օրհնի մեր գործը և նորանոր հաջողություններով պսակի մեր հետագա ծրագրերի գործադրումը: Ամեն:

Գիտական նստաշրջանը կարևոր իրադարձություն եղավ Մայր Աթոռի կյանքում և լավագույն վկայությունը Ռուս և Հայ Եկեղեցիների դարավոր բարեկամության:

ԹՂԹԱԿԻՑ